ԲՈՒՀԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Եղե՛ք ուշադիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ✓ ընտրովի պատասխանով առաջադրանքներ՝ 1-32-րդ և 46-66-րդ. տվյալ սյունակի՝ Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- ✓ կարճ պատասխանով առաջադրանքներից՝
  - 33-38-րդ և 67-69-րդ. 8-ական վանդակների համապատասխան համարի (համարների) տակ դրե՛ք X նշան (նշաններ),
  - 39-44-րդ. տվյալ վանդակներում գրե՛ք առաջադրանքների պահանջներին համապատասխանող թվերը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1 **Ո՞ր շարքում ուղղագրական սխալ *չկա:***

1) ելևէջ, տարերք, դշխեմ, ընչացք
2) երփներանգ, լվածք, անհեթեթ, օրըստօրե
3) ջղային, անբասիր, հեղեղատ, տախտակ
4) բարվոքել, սուսամբար, ճմրթված, սփրթնել

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառակապակցությունների) բաղադրիչներն են գրվում անջատ:**

1) ըստ(ամենայնի), ուս(ուսի), առ(այն), ամեն(մի)
2) ի(լրումն), մեկ(ութերորդ), գյուղե(գյուղ), որդան(կարմիր)
3) դեմ(հանդիման), լրիվ(օրյա), գլուխ(բերել), մեծ(մասամբ)
4) կողք(կողքի), մի(երկու), հարյուր(հինգ), երկ(հարկանի)

3 **Ո՞ր շարքի հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՎՐՈՍ, ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
2) ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՓՈՔՐ ՄՀԵՐ, ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐ ԼԵՌՆԱՇՂԹԱ
3) ԱՇՈՏ Բ ԵՐԿԱԹ, ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ
4) ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՄԵԾ ՀԱՅՔ, ՏԻԳՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

4 **Ո՞ր տարբերակում է տառի կամ տառակապակցության թվային արժեքը սխալ նշված:**

1) ՄԹ–209
2) ՃԻ–120
3) ՂԵ–85
4) ՔԳ–9003

5 **Ո՞ր բառում ձայնավորի սղում *չկա:***

1) փոշոտ
2) գլխավոր
3) աշնանային
4) շրջանաձև

6 **Ո՞ր տարբերակի նախադասություններում ընդգծված բառերը համանուններ *չեն:***

1) Նվագարանին նոր <u>լարեր</u> էին հարկավոր:
   Եթե նա միտքը <u>լարեր</u>, ամեն ինչ կհիշեր:
2) Ծանրամարտիկը <u>հրում</u> վարժությունում բարձր արդյունք ցույց տվեց:
   Նա համառորեն դեն էր <u>հրում</u> ուտելիքը:
3) Մայրը խմորի <u>գունդը</u> թողեց սեղանին ու դուրս եկավ:
   Վասակի ուխտադրուժ <u>գունդը</u> պարսից զորքի աջ թևում էր:
4) Անձրևի <u>ծանը</u> կաթիլները թափվում էին ցած:
   <u>Ծանը</u> ժամեր անցկացրինք նրան սպասելով:

7 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են միմյանց հոմանիշ:**

1) մառախուղ, մեգ, շամանդաղ
2) շավիղ, ձեղուն, արահետ
3) ծույլ, բիրտ, հեղգ
4) աներեր, անհողդողդ, անպատեհ

8 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն կա:**

1) **կղմինդր**–թրծած աղյուս, **երկպառակություն**–համերաշխության խախտում
2) **բուրվառ**–փշատերև ծառերից հոսող խեժ, **իղձ**–բուռն ցանկություն
3) **խայտաբղետ**–զանազան գույներից բաղկացած, **ծերպ**–մի բանի մեջ բացված ճեղք
4) **երկնուղեշ**–դեպի երկինք ձգվող ճյուղերով, **թավագեղմ**–խիտ բուրդ ունեցող

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:**

1) ջրմուղ, հավաքատեղ, մակնիշ, որկրամոլ
2) կոճգամ, գրագետ, սնահավատ, ծովանկարիչ
3) մարդատար, գովազդ, խոհանոց, բանասեր
4) բարձրադիր, գետաբերան, հարկատու, չվերթ

10 **Տրված բառերից որի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ *ընդ*-նախածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) առաջնորդ
2) օրինակելի
3) հպանցիկ
4) գծանշում

11 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-երը* վերջավորությամբ:**

1) վագր, դեղատուն, ուղղապահ, դուստր
2) ստուգայց, սարալանջ, խաղաթուղթ, բեռնատար
3) գիտափորձ, թռչնաբույն, շտաբ, ճամփեզր
4) մեծատառ, դիտակետ, հողամաս, ամսագիր

12 **Ո՞ր նախադասության մեջ գերադրական աստիճանով դրված ածական կա:**

1) Իսահակյանից ավելի լուսավոր տաղանդ այժմ ողջ Եվրոպայում չկա:
2) Հետագայում պարզվեց, որ ատոմը նյութի մանրագույն մասնիկը չէ:
3) Ճարտասանը իր խոսքը ավարտեց՝ աջակիցներին խորին շնորհակալություն հայտնելով:
4) Սիրտս ողողվում է մի անհուն ջերմությամբ, երբ հիշում եմ քույրերիս:

13 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են *ա* խոնարհման:**

1) գա, հավատա՛, հեռանում է, ասա՛
2) զարմանում, աղաց, մոռացել է, ծիծաղող
3) զոջա, կերա, կարդացի, վերացած
4) տվեց, թվում է, պարծեցող, խաղալիս

14 **Ո՞ր տարբերակում ձևաբանական վերլուծության սխալ *չկա:***

Դամբարաններից շատերն են կողոպտվել, և մեզ հասել են սոսկ կցկտուր տեղեկություններ, բայց մեկը լիովին փրկվել է՝ մեզ տեղեկացնելով հնադարյան տարաբնույթ սովորությունների մասին:

1) **կողոպտվել են** – կրավորական սեռ, **սոսկ** – սաստկական վերաբերական
2) **տեղեկացնելով** – պատճառական բայ, **մասին** – կապ, հետադրություն
3) **մեզ** – անձնական դերանուն, սեռական հոլով, **կցկտուր** – ածական
4) **հասել են** – սոսկածանցավոր բայ, **սովորությունների** – ***ի*** հոլովման գոյական

15 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ *չկա:***

1) Այդ օրերին գյուղը կրկին ստացավ մի զամբիկ՝ տեղական ձիերից բարձր:
2) - Դե՛, սիրու՛ն աստղիկներ, երկնքի՛ ճրագներ, հիմա գնացե՛ք, գիշե՛րը եկեք:
3) Նախիրը տուն քշելիս մի ցուրտ օր նա գյուղում անսովոր իրարանցում տեսավ:
4) Այդ ժամանակ նրան թվում էր, թե վաշտապետը դիտմամբ է զենք տվել իրեն:

16 **Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:**

1) Այնքան էր տարվել զրույցով, որ չնկատեց ներս մտնողներին:
2) Ամենքը կարծում էին՝ Սեմը մասնագիտությամբ նկարիչ է:
3) Հայրիկը դուրս եկավ դահլիճից. նա այնքան էլ չէր սիրում այդ երաժշտությունը:
4) Իր հարազատներին հանդիպելու համար պատրաստ էր անցնելու այդ դժվարությունների միջով:

17 **Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ենթակա:**

1) Նրան <u>**համոզելը**</u> այդքան էլ հեշտ չէ:
2) - <u>**Թագուհի՛**</u>**,** մի՞թե ինձ չես ճանաչում:
3) Խաղի <u>**կանոնները**</u> պիտի հարգեն բոլորը:
4) Փչում էր սառը քամին, <u>**դուռ ու պատուհան**</u> ծեծում:

18 **Ո՞ր նախադասության մեջ որոշիչ կա:**

1) Ծերունու այգու մոտով անցնելիս նկատեց աղջկան:
2) Սրտապատառ ներս ընկավ մի ճերմակ աղավնի:
3) Ես իմ մտքում տղային անխելք համարեցի:
4) Իշխանը խիստ մտասույզ կանգ առավ հուշարձանի առջև:

19 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Մեր պարտեզի բարձր բարդու վրա, ուր ծառը երեք մեծ ճյուղի էր բաժանվում, երկու արագիլ՝ այր ու կին, իրենց մեծ բույնն էին հյուսել այնպես, որ արագիլները իրենց ճագուկներով հանգիստ տեղավորվում էին այնտեղ:

1) 

2) 

3) 

4) 

20 **Ի՞նչ բնույթի է ստորադաս նախադասությունը:**

Հանձնի՛ր իշխանին, ինչ որ գրի ես առել այդ վաղեմի անցքերի մասին:

1) ենթակա
2) ստորոգելի
3) ուղիղ խնդիր
4) որոշիչ

21 **Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Կատակողները մի քիչ կկատակեն հասկացողները կհասկանան:
2) Սիմոնը հետ նայեց Արշակ քեռին ջրի մյուս կողմն էր կռացած փնտրում էր անցնելու տեղ առվի վրա:
3) Տղան կանգ է առնում և ընկերները նրա շուրջը շարվում են հոգնած զայրացած:
4) Պառավը կարծում էր Աղունը կախարդել է իր որդուն և հիմա այնտեղ նա նրան է պարզում իր բարի ժպիտը:

22 **Ո՞ր ոճին են առավելապես բնորոշ տրված բառերն ու բառակապակցությունները՝** *սույնով հաստատել, առ այն, ըստ որոշման, քաղվածք որոշումից, նիստի արձանագրություն:*

1) վարչական
2) գեղարվեստական
3) հրապարակախոսական
4) գիտական

23 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Հադեսի խավարամած թագավորությունում՝ մինչև պարանոցը ջրի մեջ, կանգնած է Տանտալոսը, իսկ գլխավերևում հասուն մրգերով ծանրաբեռնված ծառի ճյուղեր են:
2. Բայց մի օր նա կասկածեց աստվածներին և ցանկացավ ստուգել նրանց ամենազոր լինելը, որի համար խիստ պատժվեց. նրան գցեցին ստորերկրյա խավար աշխարհը, որտեղ նա տանջվում էր քաղցից ու ծարավից:
3. Տանտալոսը, ըստ հունական դիցաբանության, Փռուգիայի թագավորն էր, որ վայելում էր Զևսի և բոլոր աստվածների սերն ու համակրանքը:
4. Երբ ձգվում է՝ միրգը պոկելու, ճյուղերը վեր են բարձրանում, իսկ երբ կռանում է՝ ջուր խմելու, ջրերը ցած են իջնում. այսպես նա դատապարտված է հավիտենական տանջանքի:

1) 1, 3, 4, 2
2) 3, 2, 1, 4
3) 3, 1, 2, 4
4) 1, 4, 2, 3

24 **«Աշնան արև» վիպակի հերոսուհի Աղունը պատրաստվում է քաղաք գնալ՝**

1) տղային՝ Արմենակին, ամուսնացնելու:
2) Սիմոնից բաժանվելու համար:
3) կրտսեր որդուն՝ Սերոյին, քաղաք տանելու:
4) գյուղից ու գյուղական աշխատանքից հանգստանալու:

25 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Իսկ հոկտեմբերին՝ ճամփորդության չորրորդ ամսում, ձյունն այնպես առատորեն տեղաց, ...

1) որ իրար խառնեց ճամփա ու կածան:
2) ասես իրար խառնելով ճամփա ու կածան:
3) կարծես չպիտի իրար խառնվեին ճամփա ու կածան:
4) քանի որ իրար էին խառնվել ճամփա ու կածան:

26 **Ա. Բակունցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

«Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ոստյուն արեց, նրա մազոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակը անասելի թափով իջավ կնոջ թիկունքին»:

1) «Մթնաձոր»
2) «Ալպիական մանուշակ»
3) «Միրհավ»
4) «Խոնարհ աղջիկը»

27 **Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ո՞վ է դիմում Վասակ Սյունուն՝ ասելով.** *«Ստրկության ուղիներո՞վ ես ազգը տանում ոգեկան ազատության ու պետության: Ազատության ոչնչացմա՞մբ ազատություն... Ունա՞յն է հույսդ, և իզուր ջանքերդ...»:*

1) Վարդան Մամիկոնյանը
2) Վահան Ամատունին
3) Մովսես Խորենացին
4) Ներշապուհ Արծրունին

28 **«Սասնա ծռեր» էպոսում («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ինչպե՞ս է ավարտվում Դավթի և Մըսրա Մելիքի մենամարտը:**

1) Դավիթը Թուր Կեծակիով մեջտեղից երկու կես է անում Մելիքին:
2) Դավիթը կոտորում է Մըսրա Մելիքի բանակը, և Մելիքը սարսափահար փախչում է:
3) Դավիթն իր զարկերը բաշխում է Մելիքի մորն ու քրոջը, և մենամարտ տեղի չի ունենում:
4) Դավիթը գուրզով հարվածում է Մըսրա Մելիքին, և վերջինս հաշտություն է խնդրում:

29 **Ո՞ր բառն է բաց թողած:**

Աչքերը սև – ..... սև,
Արևների պես անշեջ,
Գալարում էր մեջքը թեթև
Ծաղկանկար շալի մեջ:

1) ողկույզներ
2) կայծակներ
3) հակինթներ
4) արևներ

30 **Տրված հատվածը Վ. Տերյանի ո՞ր բանաստեղծությունից է:**

Նայում եմ, մինչև որ անզոր
Գլուխս ծնկիդ է թեքվում.
Նորից ես մանուկ եմ այսօր,
Դրախտ է նորից իմ հոգում:

1) «Որպես Լաերտի որդին»
2) «Ոսկեհանդերձ եկար»
3) «Կարծես թե դարձել եմ ես տուն»
4) «Կարուսել»

31 **Մ. Մեծարենցի «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծության տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

1. Ի՜նչ հեշտին է մրթնշաղն այս սատափե
2. Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
3. Հոգիներուն կ՚իջնե երազ մը բուրյան
4. Բուրումներով օծուն հովիկն իրիկվան

1) 1, 3, 2, 4
2) 1, 2, 3, 4
3) 2, 4, 1, 3
4) 2, 4, 3, 1

32 **Ո՞ր բանաստեղծության հեղինակը Հ. Սահյանը *չէ:***

1) «Անտառում»
2) «Օրը մթնեց»
3) «Անունդ տալիս»
4) «Տաղ անձնական»

33 **Ո՞ր նախադասություններում կոչական կա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Մարիր լույսը մշուշոտ Սև հյուսերդ արձակիր Դու իմ դահիճ դու իմ քույր Դու իմ ընկեր տարագիր:
2. Թե տիրես մեծ Շահ դու նրա սրտին Թաթուլն էլ անզոր կընկնի ոտիդ տակ Հանգիստ կտիրես և Թմուկ բերդին Որ չես կարենում էսքան ժամանակ:
3. Ինձ թվացել է միշտ որ կարոտիս կառչած Ինձ սպասում է իմ Նավզիկեն:
4. Ընթերցող կարող ես հավատ չընծայել իմ գրածին և լուրջ չվերաբերվել իմ ոչ մի խոսքին:
5. Հոգիս տանը հաստատվել Տիեզերքն է ողջ պատել Տիեզերքի տերն եմ ես Ով է արդյոք նկատել:

34 **Ո՞ր նախադասություններում շաղկապի սխալ գործածություն կա:**

1. Թե ես Արա Գեղեցիկն եմ, դու Նվարդս չես:
2. Ուզում եմ, որպեսզի միշտ ծաղկի իմ երկիրը:
3. Դու պետք է նրանց անմիջապես օգնեիր, ոչ թե սպասեիր, որ նրանք խնդրեն:
4. Ես անփույթ էի ոչ միայն իմ անցյալի ու ներկայի, այլ ապագայի նկատմամբ:
5. Եվ որովհետև ես եմ ստեղծել ժամանակն ու տարածությունը, սակայն ես հզոր եմ, անմահ:

35 **Դարձվածքներից որո՞նց իմաստն է սխալ բացատրված:**

1. ***ջրերն ընկնել*** – մեկին հետևել
2. ***լեզուն կծել*** – ասելիքը մոռանալ
3. ***պոչ կպցնել*** – թերություն վերագրել
4. ***աչքին թոզ փչել*** – խորամանկությամբ ապակողմնորոշել
5. ***եղանակ ստեղծել*** – որոշիչ դեր ունենալ
6. ***գլխին նստել*** – հովանավորել
7. ***աչքի ընկնել*** – ուշադրություն գրավել
8. ***առյուծի բաժին*** – անդառնալի կորուստ

36 **Ո՞ր բառերում հնչյունների և տառերի քանակի անհամապատասխանություն կա:**

1. երեկո, 2. արևելք, 3. կարծր, 4. ով, 5. յոթերորդ, 6. նորաոճ, 7. սառնորակ, 8. աներկբա

37 **Ո՞ր նախադասություններում է ընդգծված անդամի պաշտոնը սխալ նշված:**

1. Ես գիտեմ, որ **<u>չարություն անելու դեպքում</u>** չես կարող բարություն հնձել: (*պայմանի պարագա)*
2. Քթիցս կարծես ծուխ է բարձրանում. **<u>Ինչո՞ւ</u>** է կորածն այսքան քաղցրանում: *(նպատակի պարագա)*
3. Իմ ներբանները նվում են հիմա, Ու ես տխրում եմ **<u>չափից ավելի</u>**: *(չափի պարագա)*
4. Հրամայե՛ք, որ քարանամ Եվ **<u>ձեզ նման</u>** բոլոր, բոլոր Սերունդներին ընկերանամ: *(ձևի պարագա)*
5. Հավատացնում էին, թե նա այնտեղ՝ մի **<u>պահարանի մեջ</u>**, փայփայելով պահում է իր տրեխները: *(տեղի պարագա)*

38 **Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ կա:**

1. Այս մարդկանց հանդիպումը, որոնց, թվում է, վիճակված չէր կապվել իրար հետ, շատ անսպասելի էր:
2. Սմբատը մի հայացք նետեց հանդիպակաց լեռների՝ արևից ոսկևորված կատարներին, խաղողի այգիներին և հոգոց հանելով իջավ սանդուղքներով:
3. Մի աղջիկ՝ անպաճույճ զգեստով, մետաքսյա նուրբ շալով, անակնկալի եկած կանգ առավ:
4. Այդ քաղաքում ես քնելու տեղ չունեի և ամեն անգամ փողոցներում էի թափառում, կամ մեկ-երկու օրով մնում էի ընկերոջս՝ Տիգրանի վարձած սենյակում:
5. Տեսնելով անհաշտ հարևանին՝ Սինասին, զգալով նրա ստոր մտադրությունները՝ Թևոսը ծառերից կտրելով չոր ճյուղափայտեր՝ խրեց ցանկապատի մեջ:

39 **Բառերից քանիսի՞ բաց թողած տեղում է գրվում *ճ:***

խուր–, քաղ–ր, բար–, վար–կան, փոր–անք, ձվա–եղ, տր–ակ, դար–յալ

40 **Բառերից քանիսո՞ւմ *-ուկ* վերջածանց *չկա:***

մածուկ, փափուկ, սմբուկ, բամբուկ, կտրուկ, հեղուկ, ջերմուկ, թզուկ

41 **Տրվածներից քանի՞սն են բաղադրյալ դիմավոր ձևեր:**

չեմ երգի, կերանք-խմեցինք, պետք է հասնեմ, վե՛ր կաց, թույլ կտամ, չի կորչում

42 **Նախադասության անդամներից քանիսի՞ շարահյուսական վերլուծությունն է սխալ:**

Իմ միակ հոգսը այն է, որ հավատարիմ մարդկանց պահակներ նշանակեմ, որպեսզի այսուհետև ոչ ոք չկարողանա փախչել:

- **իմ** – հատկացուցիչ
- **այն է** – բաղադրյալ ստորոգյալ
- **պահակներ** – ենթակա
- **այսուհետև** – ժամանակի պարագա
- **մարդկանց** – հանգման անուղղակի խնդիր

43 **Նախադասություններից քանիսո՞ւմ վերաբերական կա:**

- Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր:
- Ինչպես մի մռայլ ուրվական, խավարի միջից նայում էր վանքը:
- Թե կռիվը անխուսափ է, Թող չկռվեն երկու երկիր, այլ մարդ ու կին:
- Արդյոք ո՞ւր ես, խորհրդավո՛ր արշալույս:
- Գուցե ես լամ բախտիդ համար, իմ անգի՛ն:
- Ո՞նց է ժպտում իմ հոգին Չարին, բարուն, ամենքին:

44 **Նախադասություններից քանի՞սն են արևմտահայերենով:**

- Մեծ պատահարները զիս անտարբեր կը թողուն, բայց մանր դեպքերը՝ չնչին ուրիշներու աչքին, լուրջ խորհրդածություններու նյութ են ինձի:
- Եթե հույս ունինք ապագայի վերա, նորա երևեցուցիչը դուք եք, ձեզանից կախվում է ազգի ապագան, և ձեր վերա է միակ հույսը:
- Եվ շա՜տ ցավեցոյց զմէջք փափուկ օրիորդին՝ Արագ հասուցանելով ի բանակն իւր:
- Էն լեզվներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործերքը, նրանց արածներն ու ասածները:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Դրական հրամայականը պարզ ժամանակաձև է, արգելականը՝ բաղադրյալ:
2. Հայերենում կանոնավոր բայերի եզակի հրամայականը կազմվում է ***իր, ա*** կամ ***ու*** վերջավորությամբ:
3. Անկանոն բայերը հրամայական եղանակում անկանոնություն են դրսևորում:
4. Հարադրավոր բայերի արգելական հրամայականի ***մի*** մասնիկը դրվում է հարադիրի և բայի միջև:
5. Հրամայական եղանակը ունի միայն մեկ դեմք և մեկ ժամանակ:
6. Հոգնակի արգելական հրամայականը կազմվում է ***միք*** մասնիկով:

Բ ՄԱԿԱՐԴԱԿ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Երբ ձախ թեքվեցինք մայրու–ուց(1), ակնապի–(2) նայում էի այս ու այն կողմ. մոտ քա–որդ(3) դար առա–(4) եղել եմ այստեղ՝ Մակարավանքում: Քանդակազար–(5) խոյակները ոսկերչական աշխատանք են հիշեցնում: Բակի մի կողմում կուտակված են բազմաթիվ գեղակեր–(6) խաչքարեր: Քարի հար–(7) մակեր–ույթի(8) վրա երևում են նաև կոկիկ խազված գծագրեր, որոնց վրա–ով(9) պետք է շարունակվեր փորագրումը:

1) 3–ռ, 4–ջ, 6–տ, 7–դ
2) 1–ղղ, 2–շ, 6–տ, 9–յ
3) 2–շ, 3–ռ, 7–թ, 8–և
4) 1–ղղ, 4–ջ, 5–դ, 8–և

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում երկհնչյուն կա:**

1) վա–րկյան, աշխ–ժորեն, ալեհ–զ
2) թ–նոտ, բ–ղավոր, աստղաբ–լ
3) թրաղաշ–ն, անթ–լատրելի, տաքար–ն
4) սառ–ց, աղյուս–կ, ընդուն–ն

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:**

1) կթվորուհի, սանրել, մեղվապահ, ուխտադրուժ
2) ընչաքաղց, մանրուք, ալեհավաք, սիգապանծ
3) նվիրական, ծաղկեպսակ, երանգապնակ, լսափող
4) քննադատել, մոլեռանդ, ճեմասրահ, հանդիպակաց

49 **Ո՞ր շարքի բոլոր զույգերն են կազմված հականիշներից:**

1) անթաքույց–սքողված, ավերակ–շեն, լայն–անձուկ
2) բարեկիրթ–անտաշ, գոգավոր–խորդուբորդ, համախմբել–ջլատել
3) անկանոն–օրինաչափ, մարմանդ–խոտոր, խոչընդոտել–նպաստել
4) տարտամ–կենսախինդ, հրավիրել–արտաքսել, ըմբոստանալ–հնազանդվել

50 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ ածանցավոր:**

1) մարդկային, հավատ, տհաճ
2) պարագլուխ, վարք, խորազնին
3) մայիսյան, փորձանք, քարոտ
4) նրբին, վայելուչ, մեղմասահ

51 **Ո՞ր բառում անկախ գործածություն *չունեցող* արմատ կա:**

1) ծայրահեղ
2) հուշագիր
3) շողարձակ
4) դռնփակ

52 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ *չկա:***

1) Գիտնականների՝ տիեզերքի ուսումնասիրությանն ուղղված ջանքերը զերծ են շահադիտական որևէ նպատակից:
2) Ժողովուրդը փառաբանում էր ռազմական օդաչուի անօրինական սխրանքը:
3) Մեծ իմաստասերը գրեց, թե տկարամիտ են այն գլուխները, որոնց թույր կարծիքով Երկիրը լեռներից է շինված. լեռներից միայն Հայքն է շինված:
4) Թեև մրցակիցը ուժեղ էր, բայց իր համառության պատճառով մարզիկը կարողացավ հաղթել նրան:

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *անց* հոլովման:**

1) նախադուռ, գումարում, անկյուն
2) դերանուն, ամառ, շարժում
3) նուռ, սառցալեռ, մանուկ
4) աշուն, որմնասյուն, ընդմիջում

54 **Ո՞ր նախադասության մեջ հարաբերական դերանուն *չկա:***

1) Ծեր գամփռը դեռ սպասում էր, թե պառավն ինչ է ասելու:
2) Անդոն միշտ նրան օգնել է, ինչով կարողացել է:
3) Գիքորը հասկացավ, որ ինքը գամված է այդ ճանապարհին այնպես, ինչպես Ալխոն՝ այդ բեռանը:
4) Ով քաղաքից էր հեռացել նա թողել էր մշուշը ծեր:

55 **Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերբայ *չկա:***

1) Առանց մի խոսք արտասանելու՝ հանեց հուշատետրը և մի թուղթ մեկնեց աղջկան:
2) Այդ դեպքից շատ տարիներ անց ոչինչ չի մոռացվել և հավանաբար երբեք էլ չի մոռացվելու:
3) Նա այդպես էլ չէր կարողացել հարմարվել նոր միջավայրին:
4) Մթամած երկնքում ամպերը գնալով խտանում էին, մինչև որ երկինքը բոլորովին մթնեց:

56 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

1) Երբ վրանի մոտ լսեց մոր բոբիկ ոտքերի ձայնը, զգեստի խշշոցը, տղան սիրտ առավ:
2) Եթե արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ, նա առանց հոգնության երկար կմնար այդ դիրքով և չէր հագենա արդեն դեղնող ծառերի սոսափից:
3) Սարի վրա ամպ կա. շուտով այս ամպը պիտի սահի սարի վրայով և փռվի մեր ձորերի վրա:
4) Արևը մայր մտնելու մոտ էր, ծովակի կողմից փչում էր զով քամի, իսկ եղանները բարձրանում ու համաչափ իջնում էին:

57 **Ո՞ր շարքում բազմապատկական բայ *չկա:***

1) օժտել, պատռտել, կարոտել
2) անջատել, շաղակրատել, կտրատել
3) ցատկոտել, աղտոտել, մկրատել
4) պրպտել, խախտել, խոչընդոտել

58 **Տրված նախադասության ստորոգյալը ի՞նչ ժամանակաձևով է արտահայտված:**

Նա ուներ խորունկ, երկնագույն աչքեր՝ Քնքուշ ու տրտում որպես իրիկուն:

1) ըղձական անցյալ
2) անկատար անցյալ
3) անցյալ կատարյալ
4) ենթադրական անցյալ

59 **Ո՞ր նախադասության մեջ անջատման խնդիր *չկա:***

1) Տղան լավագույն գծերը ժառանգել էր հորից:
2) Ես հինգ հազար մղոն հեռացել եմ տնից, միշտ հեռու եմ եղել և միշտ կլինեմ:
3) Պետք չէ ամեն մանրուքի համար նեղանալ ընկերոջից:
4) Ղեկավարությունը նրան միաձայն ազատեց զբաղեցրած պաշտոնից:

60 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

1) Նիդեռլանդները գտնվում է Եվրոպայի հյուսիսում՝ Սառուցյալ օվկիանոսի ափին:
2) Զորքի նիզակների ու մերկ սրերի խիտ անտառը արևի ճառագայթների տակ հուրհրում է:
3) Անձրևը, խոնավությունը կաթում է մամուռների վրա, ծառերի վրա և քարափների լանջին:
4) Ոչ մի առարկություն չկա այդ հարցի վերաբերյալ:

61 **Ո՞ր բարդ ստորադասական նախադասությունն է ճիշտ փոխակերպված պարզի:**

1) *Չնայած մենք մշտապես դատապարտում ենք սուտը, երբեք չենք խորշում օգտվել նրա ծառայություններից:*
   Չնայած մեր՝ սուտը մշտապես դատապարտելուն՝ երբեք չենք խորշում օգտվել նրա ծառայություններից:
2) *Ոչ ոք չնկատեց, որ սպարապետը իր զինվորների հետ մոտենում է ամրոցին:*
   Ոչ ոք չնկատեց սպարապետին իր զինվորների հետ ամրոցին մոտենալիս:
3) *Զարուհին տարիներ առաջ թույլ տված սխալը հիշելիս չէր կարողանում ինքն իրեն ներել:*
   Երբ Զարուհին տարիներ առաջ թույլ տված սխալը հիշում էր, չէր կարողանում ինքն իրեն ներել:
4) *Մայրս մինչև անգամ պարծեցավ, որ զավակն իր կամքով ուսումնարան է մտել:*
   Մայրս մինչև անգամ պարծեցավ իր կամքով ուսումնարան մտած զավակով:

62 **Տրված նախադասություններից որո՞ւմ բաղադրյալ ստորոգյալ *չկա:***

1) Երկու ժամ այդպես քարացել էի՝ ճոճաթոռի մեջ կծկված:
2) Հենց սա է այն տղան, որ այդքան աղմուկ է հանել:
3) Մոտ էր այն օրը, երբ գործերս ավարտին պիտի հասցնեի:
4) Բաճկոնս փոքր-ինչ մեծ էր, ու ես նեղվում էի:

63 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Առաջին տղամարդը կարճահասակ էր(1) մաշկը բրոնզագույն: Մյուսը(2) բարձրահասակ էր հագին կիսաթև վերնաշապիկ(3) սև բեղ-մորուքով: Դահլիճում նստած(4) նրանք հետևում էին անցուդարձին: Որոտում է նվագը(5) թնդում գինին որ հուրհրում է(6) սափորների մեջ(7) և մի աղջիկ գեղեցկադեմ երկար վարսերով(8) պարում է ինքնամոռաց: Ապա կանգ է առնում(9) ամբողջովին բոց ու կրակ դարձած:

1) 1, 3, 5, 7, 8
2) 2, 3, 4, 5, 8
3) 2, 3, 6, 7, 9
4) 1, 5, 7, 8, 9

64 **Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Կարենը քեզ ասաց, թե դու չէիր կարող արդյոք քո խնդիրները ընտանիքիդ անդամների հետ լուծել, հետո ավելացրեց, թե քո ամեն մի քայլի մասին արդյոք պետք է ամենքն իմանային:

1) - Դու չէի՞ր կարող քո խնդիրները ընտանիքիդ անդամների հետ լուծել,- ասաց Կարենը քեզ, հետո ավելացրեց, թե քո ամեն մի քայլի մասին պետք է ամենքս իմանայի՞նք:
2) - Դու չէի՞ր կարող քո խնդիրները ընտանիքիդ անդամների հետ լուծել,- ասաց Կարենը քեզ, հետո ավելացրեց,- ամեն մի քայլիս մասին ամենքը պետք է իմանայի՞ն:
3) Կարենը քեզ ասաց, հետո ավելացրեց.
   - Դու չէի՞ր կարող քո խնդիրները ընտանիքիդ անդամների հետ լուծել,- ամեն մի քայլիդ մասին ամենքը պետք է իմանայի՞ն:
4) - Դու չէի՞ր կարող քո խնդիրները ընտանիքիդ անդամների հետ լուծել,- ասաց Կարենը քեզ, հետո ավելացրեց,- ամեն մի քայլիդ մասին ամենքը պետք է իմանայի՞ն:

65 **Ո՞ր հատվածը Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմից *չէ:***

1) Ու կռվի դաշտում շահի առաջին
   Արին մի անգամ գովքը սիրունի.
   Նրան՝ իր տեսքով, հասակով, ասին,
   Չի հասնի չքնաղ հուրին Իրանի:
2) Պտույտ է գալի չքնաղ տիրուհին,
   Անցնում է, հսկում սեղաններն ամեն,
   Հորդորում, խնդրում, որ ուրախ լինին,
   Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:
3) Աշխարհքում հաստատ չկա ոչ մի բան,
   Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին.
   Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության,
   Ոչ սիրած կնկա տված բաժակին:
4) Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին.
   Նա՝ կավատ, վարար, մի չքնաղ դժոխք, նրա բերանով Իբլիսն է խոսում:

66 **Տրված հատվածը Գ. Զոհրապի ո՞ր նորավեպից է:**

«Կը սիրե՞ր արդյոք այն երիտասարդը, որ իր ամուսինը եղած էր. այն կույր ու անտրտունջ հնազանդության մեջ, որ հայուհիներու բոլոր կյանքը կը կազմե այդ կողմերը»:

1) «Այինկա»
2) «Զաբուղոն»
3) «Այրին»
4) «Ճիտին պարտքը»

67 **Տրվածներից որո՞նք են ստորադասական շաղկապ:**

1. նույնպես, 2. իսկ, 3. որովհետև, 4. եթե, 5. սակայն, 6. թեպետ, 7. քանի որ, 8. որպեսզի

68 **Ո՞ր նախադասություններում է ընդգծվածը բուն բացահայտիչ (նախադասությունները կետադրված չեն):**

1. <u>Որպես Լաերտի որդին որպես Ուլիս մի</u> թողած և հող և տուն Անցա ծովեր ու ցամաքներ ես:
2. Դա մի քարայր էր <u>փորված դեռևս վաղնջական ժամանակներում</u>:
3. Նրան ժողովրդի կողմից սիրված ու գնահատված անձնվեր <u>զորավարին</u> չգնահատեց նենգ արքան:
4. Քարայրում <u>պատի տակ</u> երկու կմախք կար:
5. Մեծ եղբայրս <u>Հակոբը</u> բարկացած լռեցրեց Լևոնին:

69 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Հին աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը Ալեքսանդրիայի հիասքանչ փարոսն է: Այն կառուցվել է Պտղոմեոս թագավորի օրոք: Վերջինս պատվիրել էր միայն իր անունը գրել փարոսի վրա, ինչը պիտի վկայեր այն մասին, որ հենց ինքն է հրաշալիքի ստեղծողը: Սակայն նախագծող և ճարտարապետ Սոստրատեսը այս անարդարությանը չի հաշտվում և դիմում է խորամանկության: Մարմարի վրա քանդակում է նախ իր անունը՝ կոթողի վրա գրելով. «Կինգացի Սոստրատեսն այս նվիրում է փրկարար աստվածներին՝ ի սեր ծովագնացների»: Հետո այս գրվածքը ծեփում է բարակ շերտով, ապա վրայից գրում է արքայի անունը՝ համոզված լինելով, որ ամենակարող ժամանակը ծեփը կպոկի՝ երևան հանելով իր անունը, և աշխարհին հայտնի կդառնա, թե ով է կոթողի իսկական ստեղծողը: Այդպես էլ լինում է. որոշ ժամանակ անց ծեփը պոկվում է, և ի հայտ է գալիս Սոստրատեսի անունը:

Այս հրաշագեղ կոթողը մոտ յոթ հարյուր տարի դիմացել է մի շարք աղետների, լրջորեն վնասվել, բայց մնացել է կանգուն: Իսկ 14-րդ դարի հուժկու երկրաշարժից վերջնականապես կործանվել է:

1. Սոստրատեսը Պտղոմեոսի պահանջով գրում է, որ փարոսը նվիրում է փրկարար աստվածներին՝ ի սեր ծովագնացների:
2. Սոստրատեսը թագավորի անունը գրում է մարմարի վրայի գրվածքը ծածկած նոր շերտի վրա:
3. Սոստրատեսը հույս ուներ, որ ծեփը թափվելուց հետո գիտնականները կկարողանան վերծանել իր գրվածքը:
4. Փարոսի գոյության մոտ յոթ դարերի ընթացքում միայն մեկ երկրաշարժ է տեղի ունեցել, որն էլ դարձել է կոթողի կործանման պատճառ:
5. 14-րդ դարի հուժկու երկրաշարժից անմիջապես հետո հայտնի է դառնում փարոսի իրական ստեղծողի անունը:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բառի հիմնական իմաստը արտահայտում է արմատը, որը բառակազմորեն անբաժանելի է:
2. Բառերում ածանցից առաջ ընկած մասը կոչվում է հիմք:
3. Ածանցները և վերջավորությունները փոխում են բառի իմաստը:
4. Գրաբարյան *և* վերջնահնչյունը վերականգնվում է միայն հոգնակի կազմելիս:
5. *Ա* հոդակապը բառակազմական մասնիկի դեր ունի:
6. Վերջավորություններ են միայն հոլովական մասնիկները: